

# ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. սեպտեմբերի 19-ի նիստի

(արձ. N1)

1. Բավարար հիմք համարելով ներկայացված փաստաթղթերը՝

1.1 անվանափոխության առնչությամբ թույլատրել ինստիտուտի դերասանական արվեստ մասնագիտության 2016թ. Մագիստրատուրայի շրջանավարտ Գոհար (Գաբրիելա) Վարդանի Եղիկյանին հատկացնել նույն մասնագիտության բակալավրի և մագիստրոսի որակավորման դիպլոմներ Գաբրիելա Վարդանի Եղիկյան անուն, ազգանունով,

1.2 դիպլոմում անունը և մասնագիտությունը սխալ գրառելու առնչությամբ թույլատրել՝

1.2.1 ԵԹԿՊԻ-ի 1995թ. շրջանավարտ Նարինե Սերգեյի Բաղդասարյանին հատկացնել դիպլոմավորված մասնագետի նոր դիպլոմ Նարինե Սերգեյի Բաղդասարյան անուն, ազգանունով,

1.2.2 հանձնարարել ուսումնական գործընթացի համակարգման բաժնին սահմանված կարգով խոտանել 1995թ. Ն. Բաղդասարյանին տրված Ա. N 008533 համարի դիպլոմը:

2. Հոկտեմբեր ամսին կազմակերպել Ռուբեն Մամուլյանի ծննդյան 120-ամյակին նվիրված շաբաթ,

2.1 հանձնարարել Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկան Ա. Երզինկյանին հնգօրյա ժամկետում կազմել հոբելյանական շաբաթի միջոցառումների ծրագիրը:

3. Հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին վերահսկել և միջոցներ ձեռնարկել Միջազգային հարաբերությունների բաժնի աշխատանքներն ակտիվացնելու ուղղությամբ,

3.1 ս.թ. դեկտեմբեր ամսին Գիտական խորհրդում լսել Միջազգային հարաբերությունների բաժնի հաշվետվությունը:

4. ԵԹԿՊԻ-ի մասնաճյուղերում իրականացվող ուսումնական և ֆինանսական գործունեությունը վերահսկելու նպատակով ս.թ. սեպտեմբերի 27-ից Գյումրիի և Վանաձորի մասնաճյուղեր գործուղել գլխ. հաշվապահ Հ. Նալբանդյանին և պրոռեկտոր Ն. Սարգսյանին,

- 4.1 արդյունքներն ամփոփել ա.թ. հոկտեմբերի 15-ին,
- 4.2 Ռեժիսուրա մասնագիտության գծով վարպետության դաս անցկացնելու նպատակով Վանաձորի մասնաճյուղ գործուղել պրոֆեսոր Հրաչյա Գասպարյանին:
5. Հանձնարարել ինստիտուտի գույքագրման հանձնաժողովի նախագահ Վ. Եղիազարյանին ա.թ. հոկտեմբերի 1-31-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել և իրականացնել ինստիտուտի տարեկան գույքագրման գործընթացը:
6. հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին`
- 6.1 կազմակերպել ա.թ. հոկտեմբերի 6-7-ին ինստիտուտում կայանալիք միջազգային գիտաժողովի ծրագրի, ինչպես նաև ռեկտորի և պրոռեկտորների այցեքարտերի տպագրությունը,
- 6.2 եռօրյա ժամկետում կազմակերպել ֆակուլտետների դրոշմակնիքների պատրաստման աշխատանքները:
7. 2016-2017 ուս. տարվա առաջադիմության արդյունքների հիման վրա ուսանողների փոխատեղման գործընթացը կազմակերպելու նպատակով ա.թ. սեպտեմբերի 29-ին հրավիրել մանդատային հանձնաժողովի նիստ:
8. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին զբաղվել ուսման վարձերի հավաքագրման աշխատանքով,
- Առաջին կիսամյակի ուսման վարձերի մուծման վերջնաժամկետ սահմանել ա.թ. դեկտեմբերի 15-ը:
9. Հավանություն տալ ինստիտուտի հաշվարկային հաշիվները ԱՄԵՐԻԱ բանկից Հայկոնոմբանկ տեղափոխելու առաջարկին,
- 9.1 հանձնարարել ինստիտուտի համապատասխան բաժիններին կազմակերպել անհրաժեշտ գործընթացի ընթացիկ աշխատանքները:

**Գիտքարտուղար**

**Գ.Հովհաննիսյան**